տոսի[1]: 92 Եւ բաժանեալ է յինքեան չորս[2] աշխարհս փոքունս՝ ի Մանռիլի, յ[Ե]գռեւիկի[3], որ է Առանձնակ Եգերա[յ], ի Ղազիւ, [յո]րում[4]՝ Փասիս[5] գետ՝ առ հոմանուն ^քաղաք^քաղաք[աւ][6], եւ ի Ճանիւ[7], որ են Խաղտիք[8], յորում՝ գետ Մեգաղու Պոտամիա[9]: 93 Ունի եւ այլ գետս՝ զԱկամսիս, որ՝ Յոհ[10], որ գա[յ] ի Մեծ [22ա] Հայոց: 94 Ունի հինգ[11] քաղաք[ս][12]՝ Իանի[13], Կոտա[յ], Ռոդ[ի]ւպալիս[14], Աթինա[յ], Ռիզոն, եւ այլ բազում եմպ[ո]ռիոնս[15], այսինքն՝ գեղաքաղաքս ծովեզե-ր[ե]այս[16], յորոց է Տրապիզոն:

95 [17]**ԻԵ.** Աշխարհ [Վեռիա[18] է, այսինքն][19]՝ Վիրք, յելից կալով Եգեր[այ][20], յերի Սարմատիո[յ] առ Կաւկասով, մինչեւ ցԱղ[ո]ւանից[21] սահման, եւ մինչեւ ցՀայոց սահմանն՝ առ Կուր գետովն: 96 Եւ գաւառք են այս. սկսեալ ի Յոհ[22] գետոյ եւ ի հիւսիսո[յ] Տա[յ]ոց՝ Կլարճք[23], զոր ի Հա[յ]ոց հանէ[24], եւ Շաւշէթ, [եւ Սամցխէ, եւ Աճարա, եւ Թորգով[25]. եւ][26] Արտահան գաւառ, զոր առեալ է ի Հա[յ]ոց, ընդ որ անցանէ գետն հզաւր Կուր, որ ի Տա[յ]ոց գալով, ի Կող գաւառէ՝ ընդ ստորոտս Ջաւախաց իջանէ [ի][27] Սամցխէ եւ դառնա[յ] յարեւելս, անցանելով ընդ Վերի[28] աշխարհն Վրաց, բաժանելով զգաւառսն՝ զԳոռոթիսխեւ, զՏոռնիսխեւ[29], որո[յ] ի գլուխն՝ Դեկիցխէ[30] բերդ, եւ զՄանգլեացփոր, եւ [զՍամշոլդէ քա-

---

1 V Պոնտոսի *փխ* Պոնտոս *(վեր. Սուքրեանի)*

2 V ղ̆

3 V Մանիլի, յգոնիկի, S Մանիլ, ի յԸգոնեւ, ի Կի *փխ* Մանռիլի, յ[Ե]գռեւիկի *(վեր.՝ ըստ համառօտի, որտեղ երկրանուններն տրուած են* զՄանռիղի/զՄառնիւղի *եւ* զԵգռեւիկա/զԵգռեւիկի *ձեւերով. հմմտ. ուշ երկաթագիր* **Ռ** → **Ի**. *Սուքրեանը նաեւ տողատակում ծանօթագրել է.* «Մանիլ՝ ըստ այլ Օր. *Մանռիղ*, է Մնկռէլ. *Յըգոեւ* կամ *Ըգոեւ*՝ է Եգերք, *Կի*՝ է Լազիկա»*)*

4 *VS* խաղ իւրում *փխ* Ղազիւ, [յո]րում *(վեր.՝ ըստ համառօտի, ուր երկրանունն ունի* զՂազիւ *եւ* զԽազիւ *ձեւերը. հմմտ. բարբառային կամ բանաւոր* (**զ**-*ից յետոյ*) **Ղ** → **Խ** *եւ բոլորագիր* **զ** → **ղ**. *Երեմեանը վերականգնում է քիչ ստորեւ՝* «[եւ Ղազիւիկէ] եւ Ճանիւ»*)*

5 V Փասաս *փխ* Փասիս *(վեր. Սուքրեանի)*

6 V քաղաք քաղաք, S քաղաքաւ *փխ* ^քաղաք^քաղաք[աւ] *(վեր., գրիչը նախ նկարել է «քաղաք» նշանակող՝ պատուոյ նշանի տակ* թ̆յ-*անման գաղափարագիրը, ապա անփութօրէն գրել նաեւ* քղ̈ք*)*

7 S Ճանիւ *փխ* Ճանի *(V. համառօտում* զՃանի *է եւ* զՃանեթ*)*

8 V Խազտիք *փխ* Խաղտիք *(վեր. Սուքրեանի. տե՛ս բոլորագիր* **ղ** → **զ***)*

9 *Ըստ Երեմեանի՝* Մեգաղոս Պոտամոս

10 *S* է Յոհ *(V, ուր* յո̆հ *է՝ անմիտ պատուոյ նշանով)*

11 V ե̆

12 V քաղաք *փխ* քաղաք[ս] *(վեր. Սուքրեանի. V-ի գրիչը լոկ դրել է* թ̆յ-*անման գաղափարագիրը)*

13 *Ըստ Երեմեանի՝ վերականգնելի է* [Ջ]ի[գ]ան[է-ոն] *(ըստ անտիկ աղբիւրների)*

14 V ռոդւպոլիս *փխ* Ռոդիւպալիս *(վեր. Սուքրեանի. ցուցէ եւ՝ վերծանելի է* Ռոդ[ո]ւպալիս*)*

15 V եմպոռիոնս *փխ* եմպոռիոնս *(վեր. Սուքրեանի՝ ըստ նախորդի, տե՛ս նախ. Ե.8)*

16 V ծովեզերայս *փխ* ծովեզերեայս *(վեր. Սուքրեանի. հմմտ. նախ. Ե.10, 68, որ ըստ համառօտի են)*

17 V ԻԲ., S Ի. *փխ* ԻԵ. *(վեր.՝ ըստ համառօտի. Երեմեանը վեր-նում է խորագիր՝* «Ցաղագս Վրաց»*)*

18 *Ցուցէ, կարելի է այս* Վեռիա-*ի փխն. վերականգնելի համարել անտիկ եւ բիւզանդական աղբիւրների ձեւով՝* [Ի]վեռիա *կամ* [Ի]վերիա

19 *DPv* այսինքն է *փխ* է, այսինքն *(AE) / VS չիք* Վեռիա է, այսինքն *(վեր.՝ ըստ համառօտի, հմմտ. յաջորդ գլխի նոյնանման սկիզբը՝ նախ. Ե.103)*

20 V Եգեր *փխ* Եգեր[այ] *(վեր. Սուքրեանի)*

21 V ցԱղւանից *փխ* ցԱղ[ո]ւանից *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.22, Ե.69, 81, 103 եւն)*

22 *VS* Վոհ *փխ* Յոհ *(վեր.՝ ըստ նախորդի եւ յաջորդների, տե՛ս նախ. Ե.93, 119, 175, 176)*

23 *Ըստ Երեմեանի՝ վերականգնելի է* Կղարջք *(ըստ համառօտի), բայց նոյնը տե՛ս նաեւ Ե.170, 176*

24 *S* հանեալ է *փխ* հանէ *(V.* **նէ**-*ի վերեւում ուշ ձեռագրով յաւելուած է* **եալ**. *բնագրի միտքը պիտի ընկալել՝* «զոր ի Հայոց հանէ [Վիրքն]»*)*

25 *DPv* Գորգով *փխ* Թորգով *(AE)*

26 *VS չիք* եւ Սամցխէ ... եւ *(1 տող) (պայմանական վեր. համառօտից, ուր գաւառների թուարկումն է (խմբագրուած դասաւորութեամբ).* «Արտահանք, Շաւշեթ, Ջաւախք, Սամցխէ, Աճարա, Թորգով». *Երեմեանը վերականգնում է այլ տեղում.* **եւ**-*երը վերականգնել ենք ըստ V-ի. ցուցէ, ենթադրելի է, թէ նախագաղափարի այս հատուածն աւարտուել է ոչ թէ համառօտի վերջին՝* Թորգով-*ով, այլ* Սամցխէ[թ]-*ով, եւ դա էլ դարձել է V-ի գրչի վրիպման առիթը (տե՛ս* Շաւշէթ ... Սամցխէթ*)*

27 V *չիք* ի *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց)*

28 *S* Վերին *փխ* Վերի *(V. հմմտ. նախ. Ե.98)*

29 *S* զՏունիսխեւ *փխ* զՏոռնիսխեւ *(V. տե՛ս +2 ծնթ.)*

30 *Ըստ Երեմեանի՝ վերականգնելի է* Դեկից[ի]խէ